Սիրելի Եղբայրներ

Տասը տարի առաջ մենք անհրեւակայելի առաջընդաց կատարեցինք ստեղծելով առաջին եւ միակ Հայոց Գերագույն Օթյակը մեր Հայրենիքում, ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետությունում:

Այժմ անհրաժեշտ է հաջորդ պատմական քայլը կատարել կառուցելով Հայոց Գերագույն Օթյակի Տաճարը, որը կդառնա բոլոր աշխարհի շուրջով ապրող Հայ Որմնադիրների միացնող կենտրոնը, որտեղ կամրանան մեր Եղբայրական կապերը եւ որտեղ ձեռք ձեռքի Եղբայրները կաշխատեն ի նպաստ մեր սիրելի, Հայրենիքի առաջադիմությանը եւ բարգավաճությանը:

Ութը տարի առաջ Հայոց Գերագույն Օթյակը իր առատաձեռն Եղբայրների հանգանակու-թյունների շնորհիվ գնել էր երեք հազար քառակուսի մետր հողամաս Երեւան քաղաքի մերձավոր տարածքում որը գտնվում է Երեւանի Ազատության Հրապարակից 15 րոպե մեքենայով երթեւեկելու հեռավորության վրա: Անցած տարիների ժամանակաշրջանում մենք կառուցել ենք քարե ցանկապատ հողամասի սահմանների պարագծով, ջրատարի, գազի եւ ելեկտրականության գծերը մոտեցրել հողամասին:

Եղբայր Ճարտարապետի կողմից պատրաստված է Հայկական ոգով եւ Որմնադրական ոճով մի գեղեցիկ Հայոց Գերագույն Օթյակի նախագիծ:

Հայոց Գերագույն Օթյակը դիմում է աշխարհի շուրջը գտնվող մեր բոլոր Եղբայրներին եւ ընկերներին որպեսզի դրամական նվիրատվություններ կատարեն այս վեհ նպատակը իրականացնելու համար:

Տաճարի կառուցման արժեքը, համաձայն նախնական Ճարտարապետական նախագծի եւ շինարարի հաշվարկների, կազմում է $500,000 (հինգ հարյուր հազար դոլլար) իսկ կահույքը եւ հարդարման արժեքը՝ $300,000 (երեք հարյուր հազար դոլլար):

Մենք ծրագրում ենք սկսել բանվորական գծագրերը որոնք անհրաժեշտ են շինարարության թույլատվություն ստանալու նպատակով անմիջապես երբ նվիրատվությունները սկսեն ժամանել եւ այնուհետեւ սկսել շինարարական աշխատանքները: Դրամահավաքը շարունակվելու է նույնպես շինարարության ժամանակ: Եղբայրները կստանան անհրաժեշտ տեղեկություն շինարարության առաջընդացի մասին Հայոց Գերագույն Օթյակի կայքի միջոցով:

Հետեւաբար՝

ԵՂԻՐ ՄԵՐ ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԸ

դրամական նվիրատվություն կատարիր այս ազնիվ եւ վեհ նպատակի իրագործման համար որքան վոր կարող ես: Ամեն մի ստացված գումար ավելի կմոտեցնի մեզ մեր բարի եւ ազնիվ նպատակին:

Բոլոր լրացուցիչ տեղեկության համար եւ թե ինչպես նվիրատվություն կատարել՝ խնդրում ենք գրել Գերագույն Քարտուղար Հ.Մ.Ե.: Դավիթ Հակոբյանին glofarmenia@earthlink.net նշելով վերնագրում նպատակը՝ **ՀԳՕ Տաճարի Նվիրատվություն**:

Նախնապես շնորհակալություն եմ հայտնում ձեր օգնության, համագործակցության եւ առատաձեռնության համար:

Եղբայրական սիրով՝

Արմեն Սիմոնյան
Գերագույն Վարպետ